ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Ծաղկահովիտ, (093)392611 (077)251471, tsaghkahovit.hamaynq@inbox.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

## 24 ՀՈՒՆՎԱՐԻ 2022թվականի N 07-Ա

## ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով և «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ և 12-րդ հոդվածների պահանջներով, ***համայնքի ավագանին որոշում է***

Հաստատել ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի 2022 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը, համաձայն N1 հավելվածի, ընդ որում՝

ա/
Համայնքի կողմից կազմակերպվող աղբահանության վճարի դրույքաչափերը՝ համաձայն N1.1 հավելվածի,

բ/ Համայնքի կողմից մատակարարվող ջրի վարձավճարի դրույքաչափերը՝ համաձայն N1.2 հավելվածի,

գ/
Համայնքի մանկապարտեզներ հաճախող երեխաների ծնողական վճարի դրույքաչափը՝ համաձայն N1.3 հավելվածի,

դ/ Համայնքային անասնաբույժի կողմից մատուցվող վճարովի անասնաբուժական ծառայություններից օգտվելու համար վճարի դրույքաչափ՝ համաձայն N1.4 հավելվածի:

Կողմ - 9 Դեմ - 0 Ձեռնպահ - 0

ԱՆՏՈՆՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ԳԱՐԵԳԻՆՅԱՆ ԿԱՐԵՆ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐԱՄ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԻՇԱ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ՍԵՎԱԿ

ՆԻԿՈՂՈՍՅԱՆ ՄԱՆՈՒԿ

ՀԱԿՈԲՅԱՆ ԷԴԳԱՐ

ՊՈՂՈՍՅԱՆ ՎԱՉԻԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՆՈՐԱԻՆ ՀԱԿՈԲՅԱՆ

Հավելված N 1

## ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ 2022 Թ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

| Հ/Հ | Տեղական տուրքի և վճարի տեսակը | Դրույքաչափը (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| | **ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ** | |
| 1. | Համայնքի վարչական տարածքում ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) (բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար՝ | |
| 1.1 | հիմնական շենքերի և շինությունների համար | |
| ա. | մինչև 300 քմ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական/ամառանոցային/տների, նաև մինչև 200 քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար | 15.000 |
| 1.2. | Սույն կետի <ա> ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝ | |
| ա | 201-ից մինչև 500 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար | 30.000 |
| բ | 501-ից մինչև 1000 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար | 50.000 |
| գ | 1001–ից մինչև 3000 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար | 50.000 |
| դ | 3001-ից և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար | 100.000 |
| 1.3 | Ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝ | |
| ա | մինչև 20 քմ ընդհանուր մակերես ունեցող շինությունների համար | 3.000 |
| բ | 20 քմ և ավելի ընդհանուր մակերես ունեցող շինությունների համար | 5.000 |
| 2 | Համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի, շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար, եթե հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝ | |
| ա | չնախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցնե /այդ թվում՝ստորգետնյա/հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն՝ | 3.000 |
| բ | բացի շենքերի և շինությունների վերակառուցման,ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (աթ՝ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա՝ բացի սույն կետի <ա> ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարու-թյան համար սույն հոդվածի 1 ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը՝ շենքերի մակերեսի ավելացման կամ գործառնական նշանակությա փոփոխության մասով | 3000 + 1-ին կետի (ա) կամ (բ) ենթակետին համապա-տասխան դրույքաչափ |
| գ | նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտա տային չափերն ընդլայնող այ կառույցների (աթ՝ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա սույն օրենքով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինա- րարության համար սույն հոդվածի 1-ին մասին 1-ին կետով սահմանված նորմերը: | 1-ին կետի (ա) կամ (բ) ենթակետին համապպ տասխան դրույքաչափ |
| 3. | Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար | 15.000 |
| 4. | Համայնքի վարչական տարածքում լցավորման յուրաքանչյուր կայանում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուրի համար՝ | 200.000 |
| 5 | ՀՀ կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերի տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում հեղուկ վառելիքի , սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուրի համար՝ | 150.000 |
| 6 | Համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում, կրպակներում, հեղուկ վառելիքի կամ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում, ավտոլվացման կետերում, ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տնտեսվարողի գործունեության յուրաքանչյուր վայրում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝ | 30.000 |
| 7 | ՀՀ կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձր լեռնային բնակավայրերի տարածքում գտնվող խանութներում, կրպակներում, հեղուկ վառելիքի կամ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում, ավտոլվացման կետերում, կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տնտեսվարողի գործունեության յուրաքանչյուր վայրում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար, | 30.000 |

| | | |
|---|---|---|
| | օրացուցային տարվա համար՝ | |
| 8 | Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառք իրականացնելու թույլտվության համար՝ տարեկան | 50.000 |
| 9 | Համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառ թույլտվության համար | |
| ա. | Ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ | |
| -- | Մինչև 26 քմ ընդհանուր մակերես ունեցող շինության դեպքում | 5.000 |
| -- | 26-ից մինչև 50 քմ ընդհանուր մակերես ունեցող շինության դեպքում | 6.000 |
| -- | 51-ից մինչև 100 քմ ընդհանուր մակերես ունեցող շինության դոպքում | 7.000 |
| -- | 101-ից մինչև 200 քմ ընդհանուր մակերես ունեցող շինության դեպքում | 10.000 |
| -- | 201-ից մինչև 500 քմ ընդհանուր մակերես ունեցող շինության դեպքում | 13.000 |
| -- | 501 և ավելի ընդհանուր մակերես ունեցող շինության դեպքում | 25.000 |
| բ. | Ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ | |
| -- | Մինչև 26 քմ ընդհանուր մակերես ունեցող շինության դեպքում | 4.000 |
| -- | 26-ից մինչև 50 քմ ընդհանուր մակերես ունեցող շինության դեպքում | 5.000 |
| -- | 51-ից մինչև 100 քմ ընդհանուր մակերես ունեցող շինության դեպքում | 6.000 |
| -- | 101-ից մինչև 200 քմ ընդհանուր մակերես ունեցող շինության դեպքում | 10.000 |
| -- | 201-ից մինչև 500 քմ ընդհանուր մակերես ունեցող շինության դեպքում | 12.000 |
| -- | 501 և ավելի ընդհանուր մակերես ունեցող շինության դեպքում | 22.000 |
| 10 | Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի տարածքում բացօթյա առևտրի թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա 1 քմ համար | 200 |
| 11 | Համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ | |
| ա. | հիմնական շինությունների ներսում՝ | |
| -- | Մինչև 26 քմ ընդհանուր մակերես ունեցող շինության համար | 4000 |
| -- | 26-ից մինչև 50 քմ ընդհանուր մակերես ունեցող շինության համար | 6000 |
| | | |
| -- | 51-ին մինչև 100 քմ ընդհանուր մակերես ունեցող շինության համար | 10000 |
| -- | 101-ից մինչև 200 քմ ընդհանուր մակերես ունեցող շինության համար | 12000 |
| -- | 201-ից մինչև 500 քմ ընդհանուր մակերես ունեցող շինության համար | 15000 |
| բ. | Ոչ հիմնական շինությունների ներսում՝ | |
| -- | Մինչև 26 քմ ընդհանուր մակերես ունեցող շինության համար | 1.000 |
| -- | 26-ից մինչև 50 քմ ընդհանուր մակերես ունեցող շինության համար | 1.500 |
| -- | 51-ին մինչև 100 քմ ընդհանուր մակերես ունեցող շինության համար | 3.000 |
| -- | 101-ից մինչև 200 քմ ընդհանուր մակերես ունեցող շինության համար | 5.000 |
| -- | 201-ից մինչև 500 քմ ընդհանուր մակերես ունեցող շինության համար | 6.000 |
| 12. | Արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար յուրաքանչյուր ամիս 1 քմ համար | |
| ա. | ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար | 1.500 |
| բ. | թունդ ալկոհոլային սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար | 1750 |
| գ. | Սոցիալական գովազդի համար | 0 |
| դ. | այլ արտաքին գովազդի համար՝ | 750 |
| ե. | Դատարկ գովազդային վահանակների համար | 187,5 |
| զ. | Կազմակերպության գովազդի տարածման համար | 75 |
| 13 | Համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի խորհրդանիշերը (զինանշանը, անվանումը) որպես օրենքով գրանցված ապրանքային նշան կամ ապրանքների արտադրության կամ աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման գործընթացում, ինչպես նաև ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվություն տրամադրելու համար՝ օրացուցային տարում | 75.000 |
| | **ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐ** | |
| 1 | Ծաղկահովիտ համայնքում աղբահանության վարձավճարի 2022 թ-ի դրույքաչափերը | Հավելված 1.1 |
| 2 | Ծաղկահովիտ համայնքում խմելու ջրի մատակարարման վարձավճարի 2022 թ-ի դրույքաչափերը | Հավելված 1.2 |
| 3 | Ծաղկահովիտ համայնքի մանկապարտեզներում ծնողական վարձավճարի 2022 թ-ի դրույքաչափը և սահմանած արտոնությունները | Հավելված 1.3 |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՆՈՐԱՅՐ ՀԱԿՈԲՅԱՆ

Հավելված N 1.1

## ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ 2022 Թ-Ի ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ՝

| Հ/Հ | Սուբյեկտի անվանումը, տեսակը | Դրույքաչափ ՀՀ դրամ |
|---|---|---|
| 1 | Բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում կոշտ կենցաղային թափոնների համար աղբահանության վճարը սահմանվում է՝ | |
| 1) | ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական՝ | 200 |
| | ԿԱՄ՝ | |
| 2) | ըստ բնակելի շինության կամ բնակարանի ընդհանուր մակերեսի 1 քմ մակերեսի համար՝ | 8 |
| 2 | Ոչ բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում, այդ թվում՝ հասարակական եւ արտադրական շենքերում և (կամ) շինություններում աղբահանության վճարը սահմանվում է ըստ շինության ընդհանուր մակերեսի հետևյալ դրույքաչափերով. | |
| 1) | առևտր, հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ իրականացնող շինությունների մասով մեկ քմ մակերեսի համար՝ | 52 |
| 2) | հյուրանոցների և հյուրանոցային տնտեսության ծառայություններ, ինչպես նաև այլ գործունեություն իրականացնող հասարակական շինությունների մասով՝ 1քմ մակերեսի համար՝ | 25 |
| 3) | արտադրական, արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինությունների մասով՝ 1 քմ համար՝ | 12 |
| 4) | կրթական, մշակութային, առողջապահական, սպորտային և նմանատիպ այլ հասարակական շինությունների մասով՝ մեկ քմ մակերեսի համար՝ | 4 |
| 5) | շինություններում, որտեղ իրականացվում է մեկից ավելի առանձնացված տնտ եսական գործունեություն, աղբահանության վճարն ամբողջությամբ հաշվարկ-վում է տնտեսական գործունեության համար սահմանված բարձր դրույքաչափով: | |
| 3 | 3. Ոչ կենցաղային աղբի համար աղբահանության վճարը սահմանվում է՝ | |
| 1) | ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ | 3.000 |
| | ԿԱՄ՝ | |
| 2) | ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար՝ | 10.000 |
| 4 | Ամառանոցային բնակիչների համար՝ յուրաքանչյուր ընտանիքից՝ ամսական | 1000 |

- Շինություններում, որտեղ իրականացվում է մեկից ավելի առանձնացված տնտեսական գործունեություն, Աղբահանության վճարն ամբողջությամբ հաշվարկվում է տնտեսական գործունեության համար սահմանված առավել բարձր դրույքաչափի
- Վճարման ենթակա ամսական դրույքաչափը վճարվում է տարվա ընթացքում գործունեության ամիսների համար /արձակուրդների և հարկադիր պարապուրդների ընթացքում չի վճարվում/:
- Վճարումը կատարվում է ծառայությունը մատուցելուց հետո՝ մինչև հաջորդ ամսվա 5-ը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՆՈՐԱԻՆ ՀԱԿՈԲՅԱՆ

Հավելված N 1.2

# ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ 2022 Թ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ՝

| Հ/Հ | Տեղական վարձավճարի տեսակի անվանումը | Դրույքաչափը ՀՀ դրամ |
|---|---|---|
| 1 | Խմելու ջրի մատակարարման ինքնահոս համակարգի համար՝ | |
| 1.1 | Հաշվիչի առկայության դեպքում՝ 1 խմ վճար՝ | 40 |
| 2 | Էլեկտրականությամբ աշխատող համակարգի եվ մեծածախ գնով գնվող եվ մատակարարվող ջրի դեպքում՝ 1 բնակչի հաշվով՝ ամսական՝ | |
| 2.1 | Էլեկտրականությամբ աշխատող համակարգի դեպքում՝ 1 բնակչի /կամ 1 աշխատողի/ հաշվով՝ | 250 |
| 2.1 | Էլեկտրականությամբ աշխատող համակարգի եվ մեծածախ գնով գնվող եվ մատակարարվող ջրի դեպքում՝ Հարթավան, Կայք, Նիգավան, Ջրամբար՝ | 400 |
| 3 | Իրավաբանական անձանց համար՝ | |
| 3.1 | հաշվիչի բացակայության դեպքում՝ շենք մտնող խողովակի մակերեսով՝ ամսական վճարի չափը՝ | |
| | Այդ թվում՝ | |
| ա | 0,5 դյույմի դեպքում՝ | 3.600 |
| բ | 0,75 դյույմի դեպքում՝ | 6.400 |
| գ | 1,0 դյույմի դեպքում՝ | 10.000 |

- Վճարման ենթակա ամսական դրույքաչափը վճարվում է տարվա ընթացքում գործունեության ամիսների համար /արձակուրդների և հարկադիր պարապուրդների ընթացքում չի վճարվում/:
- Վճարումը կատարվում է ծառայությունը մատուցելուց հետո՝ մինչև հաջորդ ամսվա 5-ը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՆՈՐԱՅՐ ՀԱԿՈԲՅԱՆ

Հավելված N 1.3

ԾԱՂԿԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐՈՒՄ ԾՆՈՂԱԿԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ
2022 Թ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ ԵՎ ՍԱՀՄԱՆԱԾ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| Հ/Հ | Տեղական վարձավճարի տեսակի անվանումը | Դրույքաչափը ՀՀ դրամ |
|---|---|---|
| 1 | Մեկ երեխայի ամսական վարձավճարի չափը՝ | 5.000 |
| Արտոնություններ՝ | | |
| 1 | Նույն ընտանիքից 3 երեխաների համար՝ | 1-ը՝ անվճար |
| 2 | Ծնողազուրկ երեխայի համար՝ /միակողմանի և երկկողմանի / | անվճար |
| 3 | Հաշմանդամ երեխայի համար՝ | անվճար |
| 4 | Արցախյան պատերազմում զոհվածների երեխաների, կամ՝ նույն ընտանիքի անդամ հանդիսացող երեխաների՝ | անվճար |

- Ծնողական վճարումները կատարվում են ամսական կտրվածքով՝ անկախ երեխայի հաճախած օրերի քանակից, բացառությամբ համաճարակների և նմանատիպ այլ դեպքերի,
- Վարձավճարը գանձվում է ծառայության մատուցումից առաջ՝ մինչև տվյալ ամսվա 5-ը,

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՆՈՐԱԻՆ ՀԱԿՈԲՅԱՆ

Հավելված N 1.4

## ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆԱՍՆԱԲՈՒՅԺԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՎՃԱՐԻ 2022 Թ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

| Հ/Հ | Տեղական վարձավճարի տեսակի անվանումը | Դրույքաչափը ՀՀ դրամ |
|---|---|---|
| 1. | Կենդանիների հիվանդությունների բուժման, կանխարգելման հարցերով խորհրդատվություն | 500 |
| 2. | Ծննդօգնություն | |
| 2.1. | -Թեթև միջամտություն | 1 000 |
| 2.2. | -Ծանր միջամտություն | 5 000 |
| 2.3. | -Վարակիչ հիվանդությունների նկատմամբ կենդանիների իմունականխարգելիչ պատվաստումներ և այրունառում կամ այլ նմուշառում՝ կախված կենդանու տեսակից /բացառությամբ՝ <<Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում>> պետական ծրագրում ընդգրկված հակաանասնահամաճարակային միջոցառումների/ | |
| 2.3.3. | Մանր կենդանի | 100 |
| 2.3.4. | Խոշոր կենդանի | 200 |
| 3. | Կենդանիների արտաքին և ներքին մակաբույծների դեմ պայքար | 200 |
| 4. | Ախտահանություն, 1քառ. մետրը | 200 |
| 5. | Միջատազերծում /դիզինսեկցիա/ 1 քառ. մետրը | 100 |
| 6. | Կրծողների ոչնչացում /դեռատիզացիա/ 1 քառ. մետրը | 200 |
| 7. | Արհեստական սերմնավորում | 5000 |
| 8. | Կենդանու հերձում | |
| 8.1. | -մանր կենդանի | 1000 |
| 8.2. | -խոշոր կենդանի | 3000 |
| 9. | Կենդանու բուժում՝ կախված հիվանդության տեսակից և կենդանու տեսակից - Յուրաքանչյուր այցելությունը | 1000 |
| 10. | Կենդանիների նախասպանդային զննում՝ կախված կենդանու տեսակից | |
| 10.1. | - Մանր կենդանի | 1000 |
| 10.2. | - Խոշոր կենդանի | 2000 |
| 11. | Կենդանիների հետսպանդային զննում | |
| 11.1. | -մանր կենդանի | 1000 |
| 11.2. | -խոշոր կենդանի | 2000 |

- Վարձավճարը գանձվում է ծառայության մատուցման պահին

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՆՈՐԱՅՐ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Ծաղկահովիտ, (093)392611 (077)251471, tsaghkahovit.hamaynq@inbox.ru

# ՈՐՈՇՈՒՄ
## 24 ՀՈՒՆՎԱՐԻ 2022թվականի N 08-Ա
## ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ /ՏԱՊ/ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի և 82-րդ հոդվածի պահանջներով, ***համայնքի ավագանին որոշում է՝***

1. Հաստատել Ծաղկահովիտ համայնքի զարգացման հնգամյա ծրագրի շրջանակներում իրականացվող 2022թ. տարեկան աշխատանքային պլանը /ՏԱՊ/ ըստ ոլորտների՝ համաձայն N1 հավելվածի:

2. Համայնքի ղեկավարին՝ ծրագրերի ցանկն ընդգրկել համայնքի 2022թ. գնման պլանում այն մինչև փետրվարի 1-ը սահմանված կարգով հրապարակելու համար:

3. Թույլատրել համայնքի ղեկավարին՝

ա/ ծրագրի առանձին հատվածների իրականացման անհնարինության կամ խնայողությունների դեպքում նախատեսված գումարն ուղղել առաջնահերթ և հրատապ լուծում պահանջող այլ խնդիրների լուծման:

բ/ Խիստ անհրաժեշտություն առաջանալու և ֆինանսական հնարավորության դեպքում ծրագրի համար նախատեսված գումարի մինչև 20%-ի չափով կատարելու լրացուցիչ հատկացումներ:

4. Համայնքի ղեկավարին՝ ապահովել կապիտալ ծրագրերի նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում, օրենքով սահմանված կարգով կազմակերպել աշխատանքների գնման գործընթացները և ժամանակին ապահովել ծրագրերի կատարումը:

Կողմ - 9 Դեմ - 0 Ձեռնպահ - 0

ԱՆՏՈՆՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ԳԱՐԵԳԻՆՅԱՆ ԿԱՐԵՆ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐԱՄ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԻՇԱ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ՍԵՎԱԿ

ՆԻԿՈՂՈՍՅԱՆ ՄԱՆՈՒԿ

ՀԱԿՈԲՅԱՆ ԷԴԳԱՐ

ՊՈՂՈՍՅԱՆ ՎԱՉԻԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՆՈՐԱԻՐ ՀԱԿՈԲՅԱՆ

05022977

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Ծաղկահովիտ, (093)392611 (077)251471, tsaghkahovit.hamaynq@inbox.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

## 24 ՀՈՒՆՎԱՐԻ 2022թվականի N 09-Ա

## ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 5-րդ մասի, 38-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին մասի, 83-94-րդ հոդվածների, «Բյուջետային համակարգի մասին» օրենքի 32–րդ հոդվածի պահանջներով, ***համայնքի ավագանին որոշում է՝***

1. Հաստատել Ծաղկահովիտ համայնքի 2022 թվականի տարեկան բյուջեն՝
ա) 2022 թվականի տարեկան բյուջեի վարչական մասի եկամուտների գծով՝ 383 311 200 (երեք հարյուր ութսուներեք միլիոն երեք հարյուր տասնմեկ հազար երկու հարյուր) ՀՀ դրամ,

բ) 2022 թվականի տարեկան բյուջեի վարչական մասի ծախսերի գծով՝ 347 362 470,9 (երեք հարյուր քառասունյոթ միլիոն երեք հարյուր վաթսուներկու հազար չորս հարյուր յոթանասուն դրամ իննսուն լումա) ՀՀ դրամ,

գ) 2022 թվականի տարեկան բյուջեի ֆոնդային մասի եկամուտների և ծախսերի գծով՝ 100 388 164,1 (մեկ հարյուր միլիոն երեք հարյուր ութսունութ հազար մեկ հարյուր վաթսունչորս դրամ տաս լումա) ՀՀ դրամ,
գ) 2022 թվականի տարեկան բյուջեի ընդհանուր ծախսերի գծով՝ 447 750 635 (չորս հարյուր քառասունյոթ միլիոն յոթ հարյուր հիսուն հազար վեց հարյուր երեսունհինգ) ՀՀ դրամ,

2. Հաստատել համայնքի բյուջեի եկամուտներն ըստ առանձին եկամտատեսակների՝ համաձայն հատված 1–ի.

3. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերն ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման՝ համաձայն հատված 2-ի.
4. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերն ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հատված 3–ի.

5. Հաստատել համայնքի 2021 թ-ի
բյուջեի տարեվերջի հավելուրդը կամ դեֆիցիտը (պակասուրդը)՝ համաձայն հատված 4-ի,

6. Հաստատել համայնքի բյուջեի հավելուրդի օգտագործման ուղղությունները կամ դեֆիցիտի (պ ակասուրդի) ֆինանսավորման աղբյուրները՝ համաձայն հատված 5-ի,
7. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերն ըստ բյուջետային ծախսերի գործառնական և տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հատված 6–ի,
8. «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33–րդ հոդվածի 3–րդ կետի համաձայն՝
ա) թույլատրել համայնքի ղեկավարին՝ համայնքի բյուջեի կատարման ընթացքում կատարելու վերաբաշխումներ ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման ծախսերի

նախատեսված հոդվածների միջև.

բ) սահմանել, որ փոփոխությունների հանրագումարը բյուջետային տարվա ընթացքում չի կարող գերազանցել հաստատված չափաքանակների 10 % -ը:

Կողմ - 9 Դեմ - 0 Ձեռնպահ - 0

ԱՆՏՈՆՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ԳԱՐԵԳԻՆՅԱՆ ԿԱՐԵՆ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐԱՄ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԻՇԱ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ՍԵՎԱԿ

ՆԻԿՈՂՈՍՅԱՆ ՄԱՆՈՒԿ

ՀԱԿՈԲՅԱՆ ԷԴԳԱՐ

ՊՈՂՈՍՅԱՆ ՎԱՉԻԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՆՈՐԱՅՐ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Ծաղկահովիտ, (093)392611 (077)251471, tsaghkahovit.hamaynq@inbox.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ
## 24 ՀՈՒՆՎԱՐԻ 2022թվականի N 10-Ա
## ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐԱՇԵՆ, ԳԵՂԱԴԻՐ, ՀՆԱԲԵՐԴ, ԳԵՂԱՁՈՐ, ԲԵՐՔԱՌԱՏ, ԾԱՂԿԱՀՈՎԻՏ, ՎԱՐԴԱԲԼՈՒՐ, ԳԵՂԱՐՈՏ, ԾԻԼՔԱՐ ԵՎ ԼԵՌՆԱՊԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԸ ՆԵՐԱՌՈՂ ՄԻԿՐՈՌԵԳԻՈՆԱԼ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԱՐԱԳԱԾՈՏՆ-11 ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետով, ՀՀ Կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգով և հիմք ընդունելով ՀՀ Արագածոտնի մարզպետի 2022 թվականի հունվարի 3-ի N 01/5/00014-2022 գրությունը, ***համայնքի ավագանին որոշում է՝***

Հաստատել ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի Նորաշեն, Գեղադիր, Հնաբերդ, Գեղաձոր, Բերքառատ, Ծաղկահովիտ, Վարդաբլուր, Գեղարոտ, Ծիլքար և Լեռնապար բնակավայրերը ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Արագածոտն-11 համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի նախագծերը։

Կողմ - 9 Դեմ - 0 Ձեռնպահ - 0

ԱՆՏՈՆՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ԳԱՐԵԳԻՆՅԱՆ ԿԱՐԵՆ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐԱՄ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԻՇԱ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ՍԵՎԱԿ

ՆԻԿՈՂՈՍՅԱՆ ՄԱՆՈՒԿ

ՀԱԿՈԲՅԱՆ ԷԴԳԱՐ

ՊՈՂՈՍՅԱՆ ՎԱՉԻԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՆՈՐԱԻՆ ՀԱԿՈԲՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Ծաղկահովիտ, (093)392611 (077)251471, tsaghkahovit.hamaynq@inbox.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**24 ՀՈՒՆՎԱՐԻ 2022թվականի N 11-Ա**

**ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարավելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 94-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Ծաղկահովիտ համայնքի ղեկավարի առաջարկությունը. ***համայնքի ավագանին որոշում է՝***

1. Թույլատրել Ծաղկահովիտ համայնքի ղեկավարին՝ համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասերը մրցույթային կարգով վարձակալության տրամադրելու համար:

2. Հաստատել վարձակալության տրամադրվող հողակտորների մեկնարկային գները և հավելաճի քայլերը համաձայն աղյուսակ 1-ի:

3. Համայնքի ղեկավարին՝ ապահովել մրցույթի հրապարակայնությունը, նախապատրաստել համապատասխան փաստաթղթեր մրցույթը պատշաճորեն կազմակերպելու և անցկացնելու համար:

Կողմ - 9 Դեմ - 0 Ձեռնպահ - 0

ԱՆՏՈՆՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ԳԱՐԵԳԻՆՅԱՆ ԿԱՐԵՆ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐԱՄ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԻՇԱ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ՍԵՎԱԿ

ՆԻԿՈՂՈՍՅԱՆ ՄԱՆՈՒԿ

ՀԱԿՈԲՅԱՆ ԷԴԳԱՐ

ՊՈՂՈՍՅԱՆ ՎԱՉԻԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՆՈՐԱՒՆ ՀԱԿՈԲՅԱՆ

Առդիր 1

# Վարձակալությամբ տրվող հողակտորներ

| Լոտ | Գտնվելու վայրը | Ծածկագիր | Նպատակային նշանակությունը, հողատեսքը | Մակերեսը /հա/ | Մեկնարկային վճար /դրամ/ | Հավելաճի քայլը /դրամ/ | Անվանումը | Վարձակալման ժամկետ /տարի/ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Գեղաձոր | 02-031-0110-0034 | գյուղ նշանակության վարելահող /3-րդ կարգ/ | 0,90435 | 6 000 | 1 000 | վարձակալություն | 25 |
| 2 | Գեղաձոր | 02-031-0110-0009 | գյուղ նշանակության վարելահող /3-րդ կարգ/ | 1,24265 | 7 000 | 1 000 | վարձակալություն | 25 |
| 3 | Գեղաձոր | 02-031-0101-0163 | գյուղ նշանակության վարելահող /3-րդ կարգ/ | 1,66822 | 10 000 | 2 000 | վարձակալություն | 25 |
| 4 | Գեղաձոր | 02-031-0111-0021 | գյուղ նշանակության վարելահող /3-րդ կարգ/ | 1,809 | 11 000 | 2 000 | վարձակալություն | 25 |
| 5 | Գեղաձոր | 02-031-0110-0042 | գյուղ նշանակության վարելահող /3-րդ կարգ/ | 1,99891 | 12 000 | 2 000 | վարձակալություն | 25 |
| 6 | Գեղաձոր | 02-031-0110-0026 | գյուղ նշանակության վարելահող /3-րդ կարգ/ | 0,85477 | 5 500 | 1 000 | վարձակալություն | 25 |
| 7 | Գեղաձոր | 02-031-0111-0023 | գյուղ նշանակության վարելահող /4-րդ կարգ/ | 0,5946 | 4 000 | 750 | վարձակալություն | 25 |
| 8 | Գեղաձոր | 02-031-0111-0020 | գյուղ նշանակության վարելահող /4-րդ կարգ/ | 0,56282 | 4 000 | 750 | վարձակալություն | 25 |
| 9 | Գեղաձոր | 02-031-0110-0041 | գյուղ նշանակության վարելահող /4-րդ կարգ/ | 1,2443 | 8 000 | 1 500 | վարձակալություն | 25 |
| 10 | Գեղաձոր | 02-031-0111-0022 | գյուղ նշանակության վարելահող /4-րդ կարգ/ | 1,67054 | 10 000 | 2 000 | վարձակալություն | 25 |
| 11 | Գեղաձոր | 02-031-0101-0169 | գյուղ նշանակության վարելահող /4-րդ կարգ/ | 0,89921 | 5 500 | 1 000 | վարձակալություն | 25 |
| 12 | Գեղաձոր | 02-031-0111-0018 | գյուղ նշանակության արոտավայր | 1,70041 | 10 000 | 2 000 | վարձակալություն | 5 |
| 13 | Գեղաձոր | 02-031-0111-0019 | գյուղ նշանակության վարելահող /3-րդ կարգ/ | 0,27847 | 2 000 | 500 | վարձակալություն | 25 |
| 14 | Գեղաձոր | 02-031-0101-0159 | գյուղ նշանակության վարելահող /3-րդ կարգ/ | 1,36586 | 9 000 | 1 500 | վարձակալություն | 25 |
| 15 | Գեղաձոր | 02-031-0101-0173 | գյուղ նշանակության վարելահող /3-րդ կարգ/ | 1,79241 | 11 000 | 2 000 | վարձակալություն | 25 |
| 16 | Գեղաձոր | 02-031-0101-0172 | գյուղ նշանակության վարելահող /3-րդ կարգ/ | 2,03774 | 12 000 | 2 000 | վարձակալություն | 25 |
| 17 | Գեղաձոր | 02-031-0101-0174 | գյուղ նշանակության վարելահող /3-րդ կարգ/ | 1,9802 | 12 000 | 2 000 | վարձակալություն | 25 |
| 18 | Գեղաձոր | 02-031-0111-0014 | գյուղ նշանակության վարելահող /3-րդ կարգ/ | 2,65229 | 16 000 | 3 000 | վարձակալություն | 25 |
| 19 | Գեղաձոր | 02-031-0110-0045 | գյուղ նշանակության վարելահող /3-րդ կարգ/ | 1,8741 | 12 000 | 2 000 | վարձակալություն | 25 |
| 20 | Գեղաձոր | 02-031-0151-0005 | գյուղ նշանակության վարելահող /3-րդ կարգ/ | 0,61935 | 4 000 | 750 | վարձակալություն | 25 |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 21 | Գեղամռր | 02-031-0101-0175 | գյուղ նշանակության վարելահող /3-րդ կարգ/ | 0,51097 | 3 000 | 500 | վարձակալություն | 25 |
| 22 | Գեղամռր | 02-031-0111-0025 | գյուղ նշանակության վարելահող /3-րդ կարգ/ | 1,05514 | 6 500 | 1 000 | վարձակալություն | 25 |
| 23 | Գեղամռր | 02-031-0101-0171 | գյուղ նշանակության վարելահող /3-րդ կարգ/ | 1,51618 | 10 000 | 2 000 | վարձակալություն | 25 |
| 24 | Գեղամռր | 02-031-0101-0170 | գյուղ նշանակության վարելահող /3-րդ կարգ/ | 1,0997 | 6 500 | 1 000 | վարձակալություն | 25 |
| 25 | Գեղամռր | 02-031-0111-0024 | գյուղ նշանակության վարելահող /3-րդ կարգ/ | 1,03846 | 6 500 | 1 000 | վարձակալություն | 25 |
| 26 | Գեղամռր | 02-031-0110-0035 | գյուղ նշանակության վարելահող /3-րդ կարգ/ | 0,44129 | 3 000 | 500 | վարձակալություն | 25 |
| 27 | Գեղամռր | 02-031-0110-0025 | գյուղ նշանակության վարելահող /3-րդ կարգ/ | 0,84372 | 5 000 | 1 000 | վարձակալություն | 25 |
| 28 | Գեղամռր | 02-031-0110-0044 | գյուղ նշանակության վարելահող /3-րդ կարգ/ | 1,25269 | 8 000 | 1 500 | վարձակալություն | 25 |
| 29 | Գեղամռր | 02-031-0142-0034 | գյուղ նշանակության վարելահող /3-րդ կարգ/ | 0,59609 | 4 000 | 750 | վարձակալություն | 25 |

Համայնքի ղեկավար Ն. Հակոբյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Ծաղկահովիտ, (093)392611 (077)251471, tsaghkahovit.hamaynq@inbox.ru

## Ո Ր Ո Շ Ու Մ
## 24 ՀՈՒՆՎԱՐԻ 2022թվականի N 12-Ա
## ՔԱՂԱՔԱՑՈւ ՍԵՓԱԿԱՆՈւԹՅՈւՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈւԹՅՈւՆԸ ՓՈԽԵԼՈւ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետի և ՀՀ Կառավարության 2015 թվականի ապրիլի 2-ի «ՀՀ Կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» N412-Ն որոշման 15-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջներով, ***համայնքի ավագանին որոշում է՝***

Փոփոխել քաղաքացի Մանվել Ժորայի Ներսիսյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի Ծաղկահովիտ բնակավայրի վարչական տարածքում գտնվող (ծածկագիր 02-053-0105-0071) գյուղատնտեսական նպատակային նշանակության, այլ հողեր գործառնական նշանակության հողամասի գործառնական նշանակությունը՝ դարձնելով այն գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության:

Կողմ - 9 Դեմ - 0 Ձեռնպահ - 0

ԱՆՏՈՆՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ԳԱՐԵԳԻՆՅԱՆ ԿԱՐԵՆ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐԱՄ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԻՇԱ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ՍԵՎԱԿ

ՆԻԿՈՂՈՍՅԱՆ ՄԱՆՈՒԿ

ՀԱԿՈԲՅԱՆ ԷԴԳԱՐ

ՊՈՂՈՍՅԱՆ ՎԱՉԻԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՆՈՐԱԻՆ ՀԱԿՈԲՅԱՆ